



**ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ
2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՍԵՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՐԵԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԱՆՉԱՓԱՀԱՍ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ
ԱՄՓՈՓՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ – 2016



ՀՀ քննչական կոմիտեի վարույթում 2015 թվականին սեռական բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննության ընթացքում անչափահաս տուժողների իրավունքների պաշտպանության վիճակի ամփոփում: Երևան, 2016 – 38 էջ:

Ամփոփումն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի կազմակերպական-վերլուծական բաժնի և քրեական գործերի քննության աջակցության վարչության կողմից համատեղ:

Սույն ամփոփումը տպագրվում է «Հույս և օգնություն» հասարակական կազմակերպության կողմից՝ ԱՄՆ պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ) բյուրոյի ֆինանսավորմամբ:

Այս հրատարակությունում արտահայտված դիրքորոշումների համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	5
Ամփոփման մեթոդաբանություն	7
Գլուխ 1. ՀՀ քննչական կոմիտեի վարույթում անչափահասների նկատմամբ սեռական բնույթի հանցագործությունների վերաբերյալ քննված քրեական գործերով համառոտ վիճակագրական տվյալներ	8
Գլուխ 2. Սեռական բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով անչափահաս տուժողների իրավունքների պաշտպանության վիճակի վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի տարածքային մարմինների և ստորաբաժանումների տրամադրած տեղեկատվության ամփոփում.....	10
2.1. Ընդհանուր դրույթներ	10
2.2. Ենթադրյալ հանցագործության տուժողների տվյալներ.....	13
2.3. Ենթադրյալ հանցագործություն կատարած անձի տվյալներ.....	16
2.4. Տուժողի մասնակցությամբ կատարված դատավարական գործողություններ.....	18
Գլուխ 3. Սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններով անչափահաս տուժողների ներկայացուցիչների և օրինական ներկայացուցիչների հետ անանուն հարցազրույցի ամփոփ վերլուծություն	23
3.1. Ընդհանուր տեղեկատվություն.....	24
3.2. Ենթադրյալ հանցագործության տուժողների տվյալներ	24
3.3. Ենթադրյալ հանցագործություն կատարած անձի տվյալներ	25
3.4. Տուժողի մասնակցությամբ կատարված դատավարական գործողություններ.....	26

Գլուխ 4. Անչափահասների նկատմամբ սեռական ոտնձգության գործերով ԱՊՀ առանձին պետությունների, Վրաստանի օրենսդրության ու քննչական պրակտիկայի վերլուծություն	28
Գլուխ 5. Անչափահասների նկատմամբ սեռական ոտնձգության գործերով նյութերի ուսումնասիրություն և ամփոփում	31
Եզրակացություններ և առաջարկություններ	36

ՆԱԽԱԲԱՆ

Ցանկացած իրավական պետություն պետք է ելնի հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, նրա մոտ հասարակական և ստեղծագործական ակտիվության զարգացման, բարձր բարոյական հատկանիշների, հայրենասիրության և որպես քաղաքացու դաստիարակման առաջնահերթության սկզբունքներից:

Տարիքային և հոգեբանական առանձնահատկություններից, խոցելիությունից և այլ հանգամանքներից ելնելով՝ երեխաները համարվում են հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց խումբ, հատկապես, երբ երեխան քրեական դատավարությունում «ձեռք է բերում» տուժողի կարգավիճակ: Քրեական դատավարությունում, որպես կանոն, առավել կարևորվում է անչափահաս կասկածյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները, ինչի արդյունքում հաճախ ուշադրությունից և անհրաժեշտ հոգաժությունից դուրս են մնում հանցագործության տուժող կամ վկա երեխաների իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները:

Ներկայումս անհրաժեշտություն կա իրավիճակը փոխելու և քրեական դատավարությունում հատուկ ուշադրություն դարձնելու անչափահաս տուժողների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներին:

Միջազգային հանրությունը հատուկ կարևորում է հանցագործության տուժող երեխաների իրավունքների պաշտպանությունը՝ հորդորելով յուրաքանչյուր պետությանն իր ազգային օրենսդրությամբ առավելագույնս պաշտպանել երեխաներին, մասնավորապես՝ հանցագործության տուժող երեխաներին:

Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ) վավերացրել է երեխաների պաշտպանության հիմնահարցերին վերաբերող հիմնական միջազգային իրավական ակտերը, որոնց շարքում առանցքային է «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի 1989թ. կոնվենցիան:

Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշների (Բանաձև 2005/20) 3-րդ կետի համաձայն՝ պետք է սահմանել տուժող և վկա երեխաներից ցուցմունք վերցնելու հատուկ ընթացակարգեր՝ հարցաքննությունների, ցուցմունքների, լուսմների և հատկապես՝ արդարադատության գործընթացի հետ անհարկի շփումների թիվը նվազեցնելու նպատակով, այդ թվում՝ տեսաձայնագրման կիրառմամբ:

Պատահական չէ, որ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշմամբ հաստատված՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում նախատեսված է անչափահասների հարցաքննության համար հատուկ սենյակների ստեղծումը: Անչափահասների հարցաքննությունների հատուկ սենյակների առանձնացումը և կահավորումը նախատեսվում է նաև ՀՀ քննչական կոմիտեում (այսուհետ՝ Կոմիտե) բարեփոխումների 2015-2017 թվականների ռազմավարական գործողությունների ծրագրի նախագծով, մասնավորապես՝ Կոմիտեի կենտրոնական մարմնում, զինվորական քննչական գլխավոր վարչությունում, Երևան քաղաքի քննչական վարչությունում, բոլոր մարզային քննչական վարչություններում և զինվորական քննչական գլխավոր վարչության առաջին կայազորային քննչական բաժնում:

Կոմիտեում անչափահաս տուժողների իրավունքների պաշտպանության խնդրի կարևորության և այդ ոլորտում հետևողական բարեփոխումներ կատարելու անհրաժեշտության մասին է վկայում նաև Կոմիտեի 2015թ. 2-րդ կիսամյակի, ինչպես նաև Կոմիտեի 2016թ. աշխատանքի ծրագրում սեռական բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննության ընթացքում անչափահաս տուժողների իրավունքների պաշտպանության վիճակի ուսումնասիրությունը որպես ինքնուրույն նյութ ներառելը:

ԱՄՓՈՓՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունը կատարվել է Կոմիտեի կազմակերպական-վերլուծական բաժնի կողմից քրեական գործերի քննության աջակցության վարչության հետ համատեղ:

Նյութը հնարավորինս լիարժեք ներկայացնելու նպատակով անչափահասների սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի վերաբերյալ տեղեկատվություն է պահանջվել ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից, միջազգային փորձը վերլուծելու նպատակով հարցումներ են ուղարկվել ԱՊՀ անդամ մի շարք երկրներ և Վրաստան, մշակվել և Կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող մարմիններ և ստորաբաժանումներ է ուղարկվել 33 հարցադրումներից բաղկացած հարցաշար, քրեական գործերով անչափահաս տուժողների ներկայացուցիչների և օրինական ներկայացուցիչների հետ ընտրանքային կարգով ըստ նախապես համաձայնեցված հարցաթերթիկի իրականացվել են անանուն հարցազրույցներ, ուսումնասիրվել են նախաքննության փուլում գտնվող մի քանի քրեական գործեր, որոշ գործերով ուսումնասիրության առարկա են դարձվել անչափահաս տուժողների հարցաքննությունների արձանագրությունները:

ԳԼՈՒԽ 1.

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՆՆՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՀԱՄԱՌՈՏ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

2015թ. ընթացքում Կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող մարմինների և ստորաբաժանումների վարույթում քննվել են անչափահասների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի առթիվ հարուցված 71 քրեական գործեր, որոնցից 6-ը եղել են 2014թ. ընթացքում հարուցված և 2015թ. փոխանցված քրեական գործեր:

Նշված գործերից 39-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան, 13 գործով վարույթը կարճվել է (8 դեպքում՝ արարքում հանցակազմի, 4 դեպքում՝ հանցագործության դեպքի բացակայության և 1 դեպքում՝ հանցանք կատարած աձի մահվան հիմքով): 4 քրեական գործով վարույթը կասեցվել է (որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի ինքնությունն անհայտ լինելու պատճառաբանությամբ՝ 3 գործով, մեղադրյալի՝ քննությունից թաքնվելու հիմքով՝ 1 գործով), իսկ 14 քրեական գործ փոխանցվել է 2016թ.:

2014թ. ընթացքում հարուցված և 2015թ. փոխանցված 6 քրեական գործերից 5-ի ընթացքը լուծվել է 2015թ. 1-ին կիսամյակում, իսկ 1 գործի վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կասեցվել է:

71 քրեական գործերից 41-ով նախաքննությունն ավարտվել է մինչև 4 ամիս ժամկետում, 10-ով՝ 4-6 ամիս, 6 գործով՝ 6 ամսից ավել, 14 գործ փոխանցվել է 2016թ.:

71 քրեական գործերի գերակշիռ մեծամասնությունը՝ 51-ը, հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով (սեռական հարաբերությունը տասնվեց տարին

չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ), 12-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածով (անառակաբարո գործողությունները), 10-ը՝ 138-րդ հոդվածով (բռնաբարություն), 4-ը՝ 139-րդ հոդվածով (սեքսուալ բնույթի բռնի գործողությունները), 3-ը՝ 140-րդ հոդվածով (սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը): Նշված գործերից 4 դեպքում քրեական գործերը հարուցվել են հիշյալ հոդվածներով նախատեսված հանցագործությունների համակցությամբ:

Տուժող անչափահասներից 5-ը եղել են արական սեռի, մյուսներն՝ իգական:

Քննարկվող ժամանակահատվածում անչափահասների նկատմամբ սեռական ոտնձգությունների գերակշիռ մասն արձանագրվել է ՀՀ մարզերում: 71 քրեական գործերից միայն 16 դեպքում է քրեական գործ հարուցվել և գործին ընթացք տրվել Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության տարածքային ստորաբաժանումների կողմից, մյուս 47 դեպքում քրեական գործերը հարուցվել և քննվել են Կոմիտեի մարզային քննչական մարմինների և ստորաբաժանումների վարույթում, 7 քրեական գործ՝ զինվորական քննչական գլխավոր վարչության 5-րդ, 6-րդ, 8-րդ կայազորային քննչական բաժինների վարույթներում և 1 գործ՝ Կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում:

ԳԼՈՒԽ 2.

ՍԵՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՆՉԱՓԱՀԱՍ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

2015թ. ընթացքում սեռական բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննության ընթացքում անչափահաս տուժողների իրավունքների պաշտպանության վիճակի ուսումնասիրության նպատակով Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչություն, Երևան քաղաքի քննչական վարչության տարածքային ստորաբաժանումներ, հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչություն, մարզային քննչական վարչություններ և զինվորական քննչական գլխավոր վարչություն ուղարկվել է 33 հարցադրումներից բաղկացած հարցաշար, որի հիման վրա կատարված ամփոփումը ներկայացվում է ստորև¹.

2.1. Ընդհանուր դրույթներ

Կոմիտեի մարմիններում և ստորաբաժանումներում անչափահասների նկատմամբ կատարված սեռական հանցագործություններով մասնագիտացված քննիչներ չկան, բացառությամբ Կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության անչափահասների գործերով մասնագիտացում ունեցող երեք քննիչների:

Անչափահասների նկատմամբ կատարված սեռական հանցագործությունների քննության առանձնահատկություններին նվիրված թեմաներով վերապատրաստման

¹ Տեղեկատվությունը ոչ միասնական աղբյուրից ստացված լինելու արդյունքում՝ հնարավոր են թվային անհամապատասխանություններ:

դասընթացների մասնակցել են Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության, Երևան քաղաքի քննչական վարչության վարչական շրջանների քննչական բաժինների, Կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության, ինչպես նաև մարզային քննչական վարչությունների 65 քննիչներ: Նշված դասընթացները կազմակերպվել են Կոմիտեի քրեական գործերի քննության աջակցության վարչության և «Հույս և օգնություն» հասարակական կազմակերպության կողմից համատեղ՝ «Երեխաների թրաֆիքինգի և սեռական բռնությունների դեմ պայքարը (քրեաիրավական և քրեադատավարական ասպեկտներ)» թեմայով, ինչպես նաև «Էստոնիայի կանանց ուսումնասիրությունների ու հետազոտությունների կենտրոն» և «Հույս և օգնություն» հասարակական կազմակերպությունների կողմից՝ «Երեխաների պաշտպանություն բռնություններից՝ գիտելիքների ամրապնդման և լավագույն փորձի միջոցով» թեմայով, որի շրջանակներում վերապատրաստում են անցել Կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության 5 քննիչներ, այդ թվում 1-ն՝ Էստոնիայում:

Հանցագործության մասին հաղորդումները ներկայացվել են մեծամասամբ տուժողների հարազատների կողմից՝ թվով 27, տուժողներն անձամբ հաղորդում են ներկայացրել 12 քրեական գործով, բժշկական հաստատությունների կողմից հաղորդում է ներկայացվել 16 գործով, 14 քրեական գործ հարուցվել է ՀՀ ոստիկանությունից ստացված հաղորդումների հիման վրա, 1 դեպքում հաղորդում է ներկայացվել կրթական հաստատության տնօրենի, 1 դեպքում՝ բարեգործական հիմնադրամի կողմից:

Տուժողների նկատմամբ սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ 71 քրեական գործերից 2015թ. ընթացքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով միջնորդագրեր ներկայացվել են միայն 3 գործով:

1) Կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության վարույթում քննված քրեական գործով ծնողների իրավունքների սահմանափակման հայց ներկայացնելու և ծնողների վարքագծի նկատմամբ հսկողություն իրականացնելու հարցը քննարկելու մասին միջնորդագիր է ներկայացվել Արմավիրի մարզպետարան,

2) Կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության վարույթում քննված քրեական գործով հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ միջնորդագիր է ներկայացվել իրավասու պաշտոնատար անձին,

3) Կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության վարույթում քննված քրեական գործով մեղադրյալի շահերի պաշտպանի վերաբերյալ միջնորդագիր է ներկայացվել ՀՀ փաստաբանների պալատ:

71 քրեական գործից 4 ամսից ավել քննվել է 28 քրեական գործ: Նախաքննության ձգձգումները մեծամասամբ պայմանավորված են եղել հեռախոսազանգերի, հաղորդագրությունների վերծանումները, ինչպես նաև նշանակված փորձաքննությունների եզրակացություններն ուշ տրամադրելու հետ:

Քննիչների կողմից թույլ տրված խախտումներ են արձանագրվել և կարգապահական վարույթ հարուցելու միջնորդություններ են ներկայացվել ընդամենը 2 քրեական գործով:

Քննիչի կողմից խախտումներ թույլ տալու հիմքով քրեական գործի նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի միջնորդությամբ կարգապահական վարույթ է հարուցվել մարզային քննչական վարչության վարույթում քննվող քրեական գործով², ինչպես

² Քննիչի կողմից իր լիազորություններն իրականացնելու ընթացքում նոր հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու պարագայում առանձին քրեական գործ չհարուցելու պայմաններում անձին որպես մեղադրյալ ներգրավելու և նրա նկատմամբ խափանման միջոց

նաև մարզային քննչական վարչության վարույթում հարուցված և Կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության վարույթում քննված քրեական գործով³ Կոմիտեի նախագահի տեղակալ, հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության պետի կողմից Կոմիտեի նախագահին ներկայացված միջնորդության հիման վրա:

2.2. Ենթադրյալ հանցագործության տուժողների տվյալներ

Հանցագործություններից տուժած անչափահասների գերակշիռ մասը՝ 53-ը եղել են 14-16 տարեկան, 18-ը՝ մինչև 14 տարեկան, 5-ը՝ 16-18 տարեկան, որոնցից մեկի 18 տարին լրացել է նախաքննության ընթացքում:

Տուժողներից 3-ը նախկինում ևս հանդիսացել են սեռական հանցագործության տուժող (կրկնազոհացվել են)։

1) Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական

կիրառելու համար ենթարկվել է կարգապահական պատասխանատության, վերջինիս նկատմամբ կիրառվել է «զգուշացում» կարգապահական տույժը:

³ Քննիչը քրեական գործ հարուցելու հիմքերի և առիթների ակնհայտ առկայության պայմաններում տևական ժամանակ առանց իրավաչափ նպատակի քրեական գործ չհարուցելու, քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենն՝ օրենքով սահմանված կարգով հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական անձին չուղարկելու, անչափահաս տուժողների պաշտպանության ուղղությամբ անհետաձգելի դատավարական գործողություններ չկատարելու, առանց իրավաչափ նպատակի տևական ժամկետով անգործություն դրսևորելու համար, ինչպես նաև Արմավիրի մարզային քննչական վարչության պետն՝ իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում գտնվող քրեական գործով քննչական գործողությունների՝ ժամանակին կատարելուն չհետևելու համար ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, վերջիններիս նկատմամբ կիրառվել է «զգուշացում» կարգապահական տույժը:

բաժնում քննվող գործերով տուժող հանդիսացող միևնույն անձը նախկինում ևս հանդիսացել է ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով նախատեսված հանցագործության տուժող, ընդ որում՝ ոտնձգողը ևս եղել է նույն անձը,

2) Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում քննվող քրեական գործով մեղադրյալն իր ցուցմունքներում նշել է, որ տուժողի նկատմամբ նախկինում անառակաբարո գործողություններ են կատարվել այլ անձի կողմից,

3) Արագածոտնի մարզային քննչական վարչության վարույթում քննված քրեական գործով նախաքննության ընթացքում տուժողը հայտնել է, որ շուրջ 4 տարի առաջ մոր կողմից անձանոթ անձից գումար վերցնելու դիմաց իր կամքին հակառակ սեռական հարաբերություն է ունեցել անձանոթի հետ:

Սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններից տուժածների մեծամասնությունը սովորել են դպրոցում, 6-ը՝ հատուկ դպրոցներում (օժանդակ դպրոց, գիշերօթիկ հաստատություն), 4-ն՝ այլ ուսումնական հաստատություններում, 1-ը հաճախել է նախադպրոցական հաստատություն՝ մանկապարտեզ: Տուժողների թվում եղել են նաև որևէ ուսումնական հաստատությունում չսովորող կամ ուսումը կիսատ թողած անչափահասներ:

Կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում, Շիրակի մարզային քննչական վարչությունում, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվող քրեական գործերով տուժողներից 4-ի մոտ եղել են հոգեկան կամ այլ առողջական խնդիրներ (սեռավարակներ, թեթև աստիճանի մտավոր հետամնացություն՝ վարքային խանգարումներով):

Հատկանշական է, որ նախաքննության ընթացքում տուժողի կամ նրա օրինական ներկայացուցչի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98՝ հոդվածով

Նախատեսված պաշտպանության միջոցներ չեն կիրառվել ոչ մի քրեական գործով:

Տուժողին պետական կամ հասարակական կազմակերպությունների կողմից ցուցաբերվել է սոցիալական աջակցություն միայն 3 քրեական գործով.

1) Կոտայքի մարզային քննչական վարչության վարույթում քննված քրեական գործով տուժողը մոտ 4 ամիս գտնվել է երեխաների աջակցության կենտրոնում,

2) Գեղարքունիքի մարզային քննչական վարչության վարույթում քննված գործով՝ տուժողին սոցիալական աջակցություն է ցուցաբերվել մասնավոր կազմակերպության կողմից,

3) Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Մարտունու քննչական բաժնի վարույթում քննված քրեական գործով տուժողը տեղավորվել է մանկատանը:

Տուժողին աջակցություն ցուցաբերած կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից նախաքննության արդյունավետ կազմակերպմանը խոչընդոտելու դեպքեր չեն արձանագրվել:

Քրեական վարույթին որպես տուժողի ներկայացուցիչ՝ փաստաբաններ են ներգրավվել 4 գործով.

1) Արագածոտնի մարզային քննչական վարչության վարույթում քննված քրեական գործով,

2) Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի վարույթում քննված քրեական գործով (միաժամանակ ներգրավվել է 2 փաստաբան),

3) Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի վարույթում քննված քրեական գործով,

4) Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի վարույթում քննված քրեական գործով:

Բոլոր քրեական գործերով փաստաբանները հրավիրվել են տուժողների օրինական ներկայացուցիչների կողմից:

Տուժողները մինչև հանցագործությունը չեն դրսևորել վիկտիմ վարքագիծ, որևէ ձևով չեն պրովոկացրել հանցագործին:

2.3. Ենթադրյալ հանցագործություն կատարած անձի տվյալներ

Հանցագործությունից հետո տուժողներին 27 դեպքում հայտնաբերել են հարազատները, 17 դեպքում տուժողները տեղափոխվել են բժշկական հաստատություններ, 14 դեպքում ենթադրյալ հանցագործության վերաբերյալ հաղորդում է տրամադրել ՀՀ ոստիկանությունը, 12 դեպքում հանցագործության մասին հաղորդում են տրամադրել տուժողները, 1 դեպքում՝ հատուկ կրթահամալիրի տնօրենը, 1 դեպքում՝ բարեգործական հիմնադրամը:

Որպես ենթադրյալ հանցանք կատարած անձինք մատնանշվել են մեծամասամբ 20-30 տարեկան արական սեռի ներկայացուցիչներ (45), այնուհետև՝ 30-ից բարձր՝ մինչև 76 տարեկան անձինք (17) և 14-20 տարեկան անձինք (9): Ենթադրյալ հանցանք կատարած անձինք ազգությամբ հայեր են, բացառությամբ 8-ի՝ Արմավիրի (թվով՝ 6), Վայոց Ձորի և Արագածոտնի մարզային քննչական վարչություններում քննված քրեական գործերով ենթադրյալ հանցագործություն կատարած անձանց, որոնք եղել են ազգությամբ եզդի: Բոլոր գործերով ենթադրյալ հանցանք կատարած անձինք ՀՀ քաղաքացիներ են, հիմնականում միջնակարգ (37) կամ ութամյա (15) կրթությամբ, 9-ը՝ միջնակարգ կրթություն չունեցող, 2-ը՝ միջին մասնագիտական կրթությամբ, 2-ը՝ բարձրագույն, իսկ 1-ը դեռևս սովորում է ավագ դպրոցում:

Ենթադրյալ հանցանք կատարած անձինք հիմնականում չեն աշխատել (49), նրանց մի մասը զբաղվել

է հողագործությամբ կամ անասնապահությամբ, 2-ը թռչակառուններ էին, 1-ը հաշմանդամ, 5-ն աշխատել են (որպես ուսուցիչ, բանվոր, փականագործ, զինվորական): Չինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժիններում քննված 7 գործով ենթադրյալ հանցանք կատարած անձինք զինծառայողներ են եղել, որոնցից մեկը սպայական կազմից, 2-ը՝ հրամանատարական:

Ենթադրյալ հանցանք կատարած անձանց գերակշիռ մասն ամուսնացած են եղել, նրանց մի մասը փաստացի ամուսնական կապերի մեջ են գտնվել տուժողների հետ (<< քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով հարուցված քրեական գործերով):

Փաստացի քրեական հետապնդում է իրականացվել 67 անձի նկատմամբ, որոնցից 54-ը ձեռք են բերել կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ:

Քրեական հետապնդման վիճակում գտնվող անձանցից ձերբակալվել է 4-ը, 51 անձի նկատմամբ կիրառվել են խափանման միջոցներ, որոնցից 14-ը՝ կալանավորում, 34-ը՝ ստորագրություն չհեռանալու մասին, 2-ը՝ հրամանատարության հսկողությանը հանձնելը, 1-ը՝ հսկողության հանձնելը:

Փաստացի քրեական հետապնդման վիճակում գտնվող անձինք, կասկածյալը կամ մեղադրյալը գերակշիռ դեպքերում տուժողների հետ գտնվել են փաստացի ամուսնական կապերի մեջ (30 քրեական գործ), 12 գործով տուժողները և ենթադրյալ հանցանք կատարած անձինք գտնվել են ընկերական հարաբերությունների մեջ, 9 դեպքում եղել են ծանոթներ, 7 դեպքում՝ հարևաններ, 5 գործով ենթադրյալ հանցանքը կատարվել է հոր կամ խորթ հոր, 2 գործով՝ տուժողի հարազատի (հորեղբոր որդու, մորաքրոջ ամուսնու), 1 դեպքում՝ մոր նախկին ամուսնու, 1 գործով՝ ուսուցչի, իսկ 4 դեպքում՝ անծանոթների կողմից:

Ընտանիքի ներսում (կին-ամուսին, ծնող-երեխա) ոտնձգությունների դեպքերի առթիվ հարուցվել է 35

քրեական գործ, որը կազմում է ներկայացված գործերի 49.3%-ը:

Փաստացի քրեական հետապնդման վիճակում գտնվող անձանցից նախկինում սեռական հանցագործությունների համար դատապարտված է եղել մեկ անձ՝ ակնհայտ 16 տարին չլրացած անչափահաս տուժողի հետ փաստացի համատեղ ամուսնական կյանք վարելու և պարբերաբար վերջինիս հետ սեռական հարաբերություն ունենալու համար, որը ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով նախկինում դատապարտվել է ազատազրկման 1 տարի ժամկետով:

2.4. Տուժողի մասնակցությամբ կատարված դատավարական գործողություններ

Նախաքննության ընթացքում տուժողները հիմնականում հարցաքննվել են մեկից ավելի անգամ. 32 տուժողներ՝ 1 անգամ, 32 տուժող՝ 2-3 անգամ, 10-ը՝ 4-8 անգամ, 2 տուժող ընդհանրապես չի հարցաքննվել⁴:

Տուժողները լրացուցիչ հարցաքննվել են դեպքի հանգամանքները լիարժեք պարզելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, տուժողի կողմից դեպքի մանրամասները չհիշելու, հակասական ցուցմունքներ տալու պատճառաբանությամբ:

Հարկ է նշել, որ Կոմիտեի որևէ մարմնում կամ ստորաբաժանումում ոչ մի քննիչի անմիջական վերադաս պաշտոնապես չի մասնակցել տուժողի հարցաքննությանը:

Տուժողների հարցաքննությանը հիմնականում մասնակցել են մանկավարժներ, որոնք առավելապես ծանոթ չեն եղել տուժողներին (48), 15 դեպքում՝ ընդհակառակը: 11 գործով ընդհանրապես մանկավարժներ

⁴ Մեկ քրեական գործով տուժողը չի հարցաքննվել, քանի որ խուսափում էր վարույթն իրականացնող մարմին ներկայանալ, իսկ մյուս գործով՝ մանկահասակության (4 տարեկան) պատճառով:

չեն մասնակցել: Մանկավարժները հիմնականում հրավիրվել են դպրոցներից, կրթահամալիրներից, որոշ դեպքերում միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից (ուսումնարան, քոլեջ և այլն), իսկ մեկ դեպքում՝ նաև մարզպետարանից, 2 դեպքում հրավիրվել են մանկավարժ-հոգեբաններ: Հարցաքննության ընթացքում մանկավարժները տուժողին հարցեր տալու ցանկություն չեն հայտնել, քննիչի հարցադրումների կամ գործողությունների վերաբերյալ առարկություններ չեն ներկայացրել: Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննված 2 քրեական գործերով տուժողների հարցաքննությանը որպես մանկավարժ մասնակցել են մանկավարժ-հոգեբաններ: Վերջիններս օգնել են տուժողներին ցուցմունքներ տալիս ձևակերպել մտքերը:

Հարցաքննության ընթացքում մանկավարժի կողմից անչափահաս տուժողին ուղղորդելու դեպքեր չեն գրանցվել:

Հարցաքննությանը որպես մասնագետ մասնակցելու համար քննիչի կողմից հրավիրվել են հոգեբաններ միայն 3 քրեական գործերով:

1) Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում քննված քրեական գործով (հոգեբանը հրավիրվել է հաշվի առնելով կատարված արարքի բնույթը և տուժողի տարիքը), որի ընթացքում հոգեբանը դեռահաս տուժողի հետ հարցազրույցի միջոցով աջակցել է քննիչին հարցադրումներ կատարելու հարցում,

2) Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Մարտունու քննչական բաժնում քննված քրեական գործով, որով հոգեբանը հրավիրված է եղել Գավառի մանկատանից,

3) Շիրակի մարզային քննչական վարչության վարույթում քննվող քրեական գործով, որով հոգեբանի մասնակցությունը պայմանավորված է եղել նրանով, որ տուժողն ունեցել է հոգեկան խնդիրներ:

Հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննված մեկ քրեական գործով և Շիրակի մարզային քննչական վարչությունում քննված մեկ քրեական գործով տուժողի հարցաքննությանը մասնակցել է հոգեբան՝ մանկավարժի կարգավիճակով:

Մինչև հարցաքննությունը քննիչների կողմից նախապատրաստական աշխատանքներ տարվել են հիմնականում **հարցաքննության պլանի մշակման** հետ կապված, որին մանկավարժ կամ, որպես մասնագետ ճանաչված հոգեբան, չի մասնակցել: Տուժողի անձի, առողջական, սոցիալական վիճակի, ընտանիքի, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ հավաքվել են հիմնականում ուսումնական հաստատություններից, որտեղ սովորել է տուժողը, բժշկական հաստատություններից, ծնողներից, հարազատներից, բնակության վայրից, տեղական ինքնակառավարման մարմիններից, համատիրությունից, ոստիկանությունից: Հարցաքննություններն անց են կացվել հիմնականում քննիչների աշխատասենյակներում, որոնք տուժողի համար առավել անկաշկանդ մթնոլորտ ապահովելու համար որոշակի իրերով (օրինակ՝ խաղալիքներով) լրացված չեն եղել: 1 դեպքում քննիչի աշխատասենյակում հարցազրույց է անց կացվել դեռահաս տուժողի հետ՝ մատիտներ, թուղթ, կոնֆետներ տրամադրելով, իսկ մեկ դեպքում՝ հարցաքննությունն անց է կացվել ուսումնական հաստատության քննական սենյակում: Թվով 5՝ Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում (1 գործ), Վայոց Ձորի մարզային քննչական վարչությունում (3 գործ) և Արագածոտնի մարզային քննչական վարչությունում (1 գործ) քննված գործերով տուժողների հարցաքննությունն անցկացվել է անչափահասների հարցաքննության սենյակներում:

Թվով 71 գործերից **հարցաքննության ընթացքը տեսագրվել** է միայն 2 քրեական գործով՝ Արագածոտնի մարզային քննչական վարչության և Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվող (առերես հարցաքննության) քրեական գործերով:

Վերը նշված 71 գործերից առերեսումներ կատարվել են 18 քրեական գործով՝ տուժողներն առերեսվել են կասկածյալի կամ մեղադրյալի հետ: Ոչ մի գործով չի կիրառվել «միջնորդավորված առերեսման» մեթոդը:

Գործնականում տուժողների հարցաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ օրենքով նախատեսվածից **հարցաքննության առավել սեղմ տևողություն** հիմնականում չի սահմանվել, միայն մեկ գործով՝ Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում քննիչի կողմից սահմանվել է հարցաքննության առավել սեղմ տևողություն, քանի որ տուժողը 6 տարեկան է եղել՝ նրա համար հոգեճնշող վիճակ չառաջացնելու նպատակով:

Տուժողների հարցաքննության ընթացքում **մատիտներով կամ գրիչներով նկարելու, խաղալիքների կամ խաղի միջոցով հարցաքննությունը վարելու** կամ անչափահասների հարցաքննության այլ հատուկ մեթոդներ կիրառվել են միայն 2 գործով. Արագածոտնի մարզային քննչական վարչության և Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի վարույթում քննված մեկական քրեական գործերով:

Փորձաքննություններ, փորձանմուշներ վերցնել և ճանաչման ներկայացնել

Տուժողների նկատմամբ թվով 43 քրեական գործով նշանակվել են փորձաքննություններ, հիմնականում՝ դատաբժշկական, դատահոգեբանական, դատահոգեբուժական, դատակենսաբանական: Փորձաքննություններին տուժողները մեծամասամբ մասնակցել են կամավոր,

բացառությամբ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում քննված մեկ քրեական գործով, որի ընթացքում տուժողը հրաժարվել է ենթարկվել դատաբժշկական փորձաքննության և Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանի քննչական բաժնի վարույթում քննված մեկ քրեական գործով, որով տուժողի մայրը հրաժարվել է իր դատերը ներկայացնել դատաբժշկական փորձաքննության:

Տուժողներից փորձանմուշներ են վերցվել 12 քրեական գործով, որոնցից միայն մեկ դեպքում է տուժողը հրաժարվել փորձանմուշ տրամադրելուց:

Տուժողի մասնակցությամբ ճանաչման ներկայացնելու քննչական գործողությունը կատարվել է միայն 2 քրեական գործով՝

1) Շիրակի մարզային քննչական վարչության վարույթում քննված քրեական գործով տուժողը ճանաչել է ենթադրյալ հանցանք կատարած անձին և հայտարարել այդ մասին,

2) Կոտայքի մարզային քննչական վարչության վարույթում քննված քրեական գործով կատարվել է լուսանկարով ճանաչման ներկայացնելու քննչական գործողություն, որի ընթացքում տուժողը ճանաչել է ենթադրյալ հանցանք կատարած անձի լուսանկարը:

ԳԼՈՒԽ 3.

ՍԵՌԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՆՉԱՓԱՀԱՍ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ԱՆԱՆՈՒՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՄՓՈՓ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2015թ. ընթացքում Կոմիտեի ստորաբաժանումներում և մարմիններում քննվող (քննված) սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններով քրեական գործերից 6-ով անչափահաս տուժողների ներկայացուցիչների և օրինական ներկայացուցիչների մասնակցությամբ իրականացվել է 7 հարցազրույց՝ ըստ նախապես համաձայնեցված հարցաթերթիկի: Հարցազրույցներն անցկացվել են 2 ներկայացուցչի, 4 օրինական ներկայացուցչի և 1 տուժողի հետ (տուժողն ինքնակամ է հայտնել ցանկություն խոսել քրեական գործի վերաբերյալ, երբ իր օրինական ներկայացուցչից տեղեկացավ հարցազրույցի մասին):

Հարցվողների ընտրանքն իրականացվել է Կոմիտեի ստորաբաժանումներից և մարմիններից ուղարկված հարցաքննությունների արձանագրություններից առանձնացնելով առավել հետաքրքրություն ներկայացնող դեպքերը:

Հարցազրույցներն անց են կացվել հեռախոսազանգի միջոցով, որի ընտրությունը հարցվողները հիմնավորել են անմիջական հանդիպման համար ժամանակի սղությանը, հեռավորությամբ, իրավապահ մարմին չգալու, ինչպես նաև իրավապահ մարմնի ներկայացուցչի հետ իրենց բնակության կամ որևէ այլ վայրում հանդիպելու ցանկության բացակայությամբ:

Ընտրված բոլոր հարցվողները բանավոր համաձայնվել են մասնակցել հարցազրույցին, իսկ նրանցից 57% շնորհակալություն է հայտնել, որ իրենց կարծիքը հետաքրքիր է

վարույթ իրականացնող մարմնին՝ անկախ քրեական գործի ընթացքից:

Հարցվողներից ստացված տեղեկատվությունը ստորև ներկայացվում է խմբավորված՝ ըստ տեղեկատվության բնույթի.⁵

3.1. Ընդհանուր տեղեկատվություն

6 քրեական գործերից չորսով իրավապահ մարմիններին ահազանգել են ծնողները, մեկով՝ դպրոցը, որտեղ սովորում էր երեխան, իսկ մեկ այլ գործով՝ բուժական հաստատությունը, որտեղ դիմել էր երեխան իր մոր հետ՝ ծննդագիտական օգնություն ստանալու նպատակով: Ահազանգել են կա՛մ ոստիկանություն, կա՛մ Կոմիտե, կա՛մ դատախազություն:

6 քրեական գործով ներգրավված է եղել 7 տուժող երեխա:

Հարցվողները նշեցին, որ որոշ դեպքերում նախաքննությունը տևել է 4 ամսից ավել, սակայն դա նրանց չի անհանգստացրել:

Բոլոր տուժող երեխաները քննչական գործողություններին մասնակցել են օրինական ներկայացուցչի հետ, մեկ օրինական ներկայացուցիչ գրավոր դիմում է ներկայացրել իր դստեր մասնակցությամբ քննչական գործողություններին իրեն չներգրավվելու մասին:

Փաստաբան ներկայացուցիչ ունեցել է 2 տուժող երեխա:

3.2. Ենթադրյալ հանցագործության տուժողների տվյալներ

Ենթադրյալ հանցագործության կատարման պահին երեխաները եղել են՝ 1-ական երեխա 3 և 6 տարեկան, 2 երեխա՝ 14 տարեկան և 3 երեխա՝ 15 տարեկան:

⁵ Ներկայացված տվյալներն անանուն են, ոչ պաշտոնական և կարող են չհամընկնել պաշտոնական տվյալների հետ:

Տուժողներից ոչ մեկը նախկինում սեռական հանցագործության տուժող չի եղել:

Ըստ հարցվողների բոլոր տուժողներից 6-ը դրական են բնութագրվել կրթական հաստատությունների կողմից, միայն մեկն է բնութագրվել բացասական. մասնավորապես չի հաճախել դպրոց, չի սովորել՝ համարելով ուսումն իր համար ոչ պիտանի և ոչ նպատակային:

Ըստ հարցվողների՝ երեխաներից ոչ մեկը մինչև ենթադրյալ հանցագործությունը չի ունեցել որևէ հոգեկան կամ այլ առողջական խնդիր, բայց երեք տուժողի մոտ (մեկ տուժողի մոտ առավել արտահայտված) ենթադրյալ հանցագործության կատարումից հետո նկատվել է ընկճում, տագնապայնություն, վախ, անվստահություն շրջապատի նկատմամբ, մեկուսացում հասարակությունից, պարբերական ջղաձգվածություն և այլ բացասական երևույթներ:

Վերը նշված դեպքերով տուժողներին պետական կամ հասարակական որևէ կազմակերպության կողմից սոցիալական աջակցություն չի ցուցաբերվել:

Հարցվողների կարծիքով տուժող երեխաներից ոչ մեկը վիկտիմ վարքագիծ չի դրսևորել:

3.3. Ենթադրյալ հանցագործություն կատարած անձի տվյալներ

Քանի որ 6 քրեական գործերից 4-ով տուժող երեխան և ենթադրյալ հանցագործը ծանոթ են եղել, հետևաբար երեխաները և նրանց օրինական ներկայացուցիչներն են մատնանշել ենթադրյալ հանցագործի ով լինելու հանգամանքը: 2 քրեական գործերով ենթադրյալ հանցագործներն անծանոթ են եղել երեխաներին և նրանց օրինական ներկայացուցիչներին: Հարցվողները դժվարանում էին հստակ պատասխանել վերջիններիս զբաղմունքի մասին, ըստ նրանց՝ միայն 2 քրեական գործով ենթադրյալ հանցագործն աշխատում էր: Ենթադրյալ բոլոր հանցագործներն արական սեռի են եղել (մեկի ինքնությունն

այդպես էլ չի պարզվել, բայց նա համացանցում գրանցված է եղել տղամարդու անունով): Հարցվողներից միայն մեկը կարողացավ հստակ պատասխանել, որ ենթադրյալ հանցագործի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, մյուս հարցվողները կա՛մ տեղյակ չէին ընտրված խափանման միջոցի մասին, կա՛մ նրանց այդ հանգամանքը չէր հետաքրքրում: Ենթադրյալ հանցագործի նախկին դատվածության մասին հարցվողները տեղեկություն չունեին:

3.4. Տուժողի մասնակցությամբ կատարած դատավարական գործողություններ

Քրեական գործով նախաքննության ընթացքում տուժողները հարցաքննվել են մի քանի անգամ՝ 3 քրեական գործով՝ 2 անգամ, 2 քրեական գործով՝ 3 անգամ, 1 քրեական գործով 4 անգամ⁶: Որպես կանոն բոլոր քրեական գործերով եղել է լրացուցիչ հարցաքննության անհրաժեշտություն:

Քննիչի անմիջական վերադասը պաշտոնապես չի մասնակցել տուժողի հարցաքննությանը: Քրեական գործերով իրականացված հարցաքննություններից 33%-ով եղել են ներգրավված փաստաբաններ, 66%-ով՝ մանկավարժներ և 100% օրինական ներկայացուցիչներ, որոնցից մեկը հրաժարվել է մասնակցել հետագա քննչական գործողություններին:

Մանկավարժները եղել են դպրոցների ուսուցիչներ, ովքեր հրավիրվել են վարույթ իրականացնող մարմնի կողմից: Մեկ քրեական գործով երեխան ճանաչել է մասնագետին, մյուս դեպքերով՝ երեխան և մասնագետը հանդիպել են առաջին անգամ: Երկու դեպքով քննիչը մինչև

⁶ Ըստ հարցվողների այս քրեական գործով եղել է մեկ հարցաքննություն, մեկ լրացուցիչ հարցաքննություն և երկու առերեսում:

հարցաքննությունը գրուցել է մասնագետի հետ, ծանոթացրել հանգամանքներին և հնարավորություն է տվել մասնագետին ծանոթանալ երեխայի հետ, ինչն ըստ հարցվողների՝ դրական ազդեցություն է թողել երեխայի վրա:

Ըստ հարցվողների՝ հարցաքննությունները չեն տեսագրվել:

Երկու քրեական գործով երեխաները մասնակցել են առերեսման: Առերեսման մասնակիցներից մեկը, գտնվելով հուզական գերձանր վիճակում, անգամ արտասվել է, քանի որ առերեսման ժամանակ նրան վիրավորել է ենթադրյալ հանցագործը՝ պնդելով, որ իր հետ ամուսնացած լինելու ժամանակ տուժողը սեռական կյանքով ապրել է այլ տղամարդկանց, այլ ոչ թե՝ իր հետ:

Հարցվողներից 5-ը նշել են, որ երեխաներին զննել է նաև բժիշկը, իսկ փորձանմուշներ վերցնելու մասին հաստատապես հիշեց միայն մեկ հարցվող, մյուսները՝ ենթադրաբար կամ աղոտ էին հիշում դրանց վերցնելը:

Հարցվողների մեծամասնությունը գոհ էին քննիչի կողմից կատարված աշխատանքներից, մեկն անգամ գնահատեց՝ արտակարգ, բայց քրեական գործերից մեկով քննիչը, ըստ հարցվողի, չի պահպանել գաղտնիությունը և անչափահասի հետ կատարվածը դարձել է քննարկման առարկա բնակության վայրում:

Չբացված գործերից մեկով օրինական ներկայացուցիչներն ափսոսում էին, որ քննիչի լավ աշխատանքի հետ մեկտեղ հնարավոր չի եղել դեպքը բացահայտել, պարզել, թե որտեղից էր հանցագործը մուտք գործել համացանց, ինչպես նաև վերջինիս ինքնությունը: Նա նշեց, որ հետայսու ավելի զգոն կլինի երեխայի՝ համակարգից օգտվելու հանգամանքին, բայց եթե այդպիսի իրավիճակ նորից կրկնվի, այլևս չի դիմի իրավապահ մարմիններին, քանի որ դիմելը որևէ արդյունք չի տվել:

ԳԼՈՒԽ 4.
ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՌԱԿԱՆ
ՈՏՆՁԳՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ

Անչափահասների նկատմամբ սեռական բնույթի հանցագործությունների քննության որակական կողմը բնութագրելու նպատակով ուսումնասիրվել է վարույթը կարճված 2 և վարույթը կասեցված 1 քրեական գործ, ինչպես նաև ընթացքի մեջ գտնվող 10 քրեական գործերով անչափահաս տուժողների հարցաքննության արձանագրությունները:

Քրեական գործի նյութերի և հարցաքննության արձանագրությունների ուսումնասիրությամբ պարզվել է, որ, նախաքննության ընթացքում, որպես կանոն, անչափահասները հարցաքննվել են 3 և ավելի անգամներ, իսկ մինչ այդ նյութերի նախապատրաստման փուլում նույնաբովանդակ բացատրություն են տվել հետաքննիչի կամ քննիչի մոտ: Անչափահասների հարցաքննությանը մանկավարժի մասնակցությունը շատ դեպքերում քննիչների կողմից ապահովվել է ձևականորեն՝ միևնույն գործով յուրաքանչյուր անգամ անչափահասին լրացուցիչ հարցաքննելիս մասնակից է դարձվել նոր մանկավարժ, որը տեղյակ չի եղել գործի հանգամանքներից, անչափահաս տուժողի տված նախորդ ցուցմունքներից, ինչով էլ պայմանավորված է և բացատրվում է մանկավարժների պասիվությունը քննչական գործողության ընթացքում:

Հարցաքննությանը մանկավարժի մասնակցությունը հավաստվում է անչափահասի ցուցմունքը մանկավարժի ստորագրությամբ հաստատելով և գործի նյութերին վերջինիս մանկավարժական կրթությունը հաստատող փաստաթուղթի պատճենը կցելով: Մանկավարժի մասնակցությունն ապահովելու օրենսդրական պահանջի նկատմամբ անտարբեր վերաբերմունքի վառ դրսևորում է մարզային քննչական վարչության վարույթում ՀՀ քրեական

օրենսգրքի 142-րդ հոդվածի հատկանիշներով (անառակաբարո գործողություններ) հարուցված քրեական գործով միջնակարգ ուսումնական հաստատությունում դասավանդող, մասնագիտությամբ ինժեներ-մեխանիկին անչափահասի հարցաքննությանը որպես մանկավարժ մասնակից դարձնելը (դիպլոմի պատճենը կցված է քրեական գործի նյութերին), ինչպես նաև զինվորական քննչական գլխավոր վարչության կայագորային քննչական բաժնի վարությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի հատկանիշներով (բռնաբարության դեպքի առթիվ) հարուցված քրեական գործով անչափահաս տուժողի հարցաքննությանը որպես մանկավարժ դպրոցի զինղեկավարին մասնակից դարձնելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի համաձայն՝ 16 տարին չլրացած վկային կամ տուժողին բացատրվում է գործին վերաբերող ամեն ինչի մասին ճշմարտացիորեն պատմելու նրա պարտականությունը, բայց նա չի նախագգուշացվում ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին:⁷

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205¹ հոդվածը սահմանում է հարցաքննության տևողությունը՝ հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի հարցաքննությունը՝ երկու ժամից ավելի: Հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձին հանգստի և սնվելու

⁷ Քրեական գործերի, ինչպես նաև ցուցմունքների պատճենների ուսումնասիրությամբ ի հայտ են բերվել դեպքեր, երբ տասնվեց տարին չլրացած տուժողը քննիչի կողմից նախագգուշացվել է ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին:

համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել ութ, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի համար՝ վեց ժամը:

Զինվորական քննչական գլխավոր վարչության 5-րդ կայազորային քննչական բաժնի վարույթում քննված մեկ քրեական գործով անչափահաս տուժողի հարցաքննությունը գերազանցել է նշված հոդվածով նախատեսված 2 ժամը և տևել է 2 ժամ 15 րոպե: Բացի այդ, նշված քրեական գործով տուժողի ցուցմունքում, որոշ դեպքերում, քննիչի հարցադրումներն արտացոլված չեն արձանագրության մեջ, տուժողը, պատասխանում է քննիչի բանավոր հնչեցրած հարցերին, որոնց բովանդակության մասին կարելի է միայն ենթադրություն անել բացառապես ելնելով շարադրված պատասխանից:

Որոշ դեպքերում հարցաքննության արձանագրություններում քննիչների կողմից արտացոլված ձևակերպումները չեն համապատասխանում հարցաքննված անչափահասի տարիքային և մտավոր զարգացածության աստիճանին: Այսպես՝ մարզային քննչական վարչության վարույթում քննված մեկ քրեական գործով չորսամյա տուժողի ցուցմունքի ազատ շարադրանքում, ինչպես նաև քննիչի կողմից անչափահասին ուղղված հարցադրումներում օգտագործվում են ակնհայտորեն անչափահասի համար անհասկանալի ձևակերպումներ, ինչպես օրինակ՝ «առնանդամ», «սեռական օրգան», «Ռուսաստանի Դաշնություն» և այլն:

ԳԼՈՒԽ 5.

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՊՀ ԱՌԱՆՁԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՔՆՆՉԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Անչափահասների նկատմամբ սեռական բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով միջազգային փորձը վերլուծելու նպատակով հարցումներ են ուղարկվել ԱՊՀ անդամ մի շարք երկրներ և Վրաստան:

Միջազգային փորձի վերլուծության արդյունքները կարելի է համակարգել հետևյալ կերպ.

1.1. Պետություններ, որոնց նախաքննության մարմինների կազմում չկան անչափահասների գործերի քննության գործում հատուկ մասնագիտացում ունեցող քննիչներ:

Այսպես՝ Բելարուսում, Ուզբեկստանում, Ռուսաստանի Դաշնությունում, Տաջիկստանում չկան անչափահասների գործերի քննության գործում հատուկ մասնագիտացում ունեցող քննիչներ:

1.2. Պետություններ, որոնց նախաքննության մարմինների կազմում կան միայն անչափահասների կողմից կատարված հանցագործությունների քննության գործում հատուկ մասնագիտացում ունեցող քննիչներ:

Վրաստանում հատուկ պատրաստվածություն անցած քննիչները քննում են անչափահասների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը, սակայն բոլոր այն դեպքերում, երբ տուժողն անչափահաս է, դատավարական գործողություններ կարող է կատարել ցանկացած քննիչ:

1.3. Պետություններ, որոնց նախաքննության մարմինների կազմում կան անչափահասների գործերի քննության գործում հատուկ մասնագիտացում ունեցող քննիչներ:

Մոլդովայում և Ղազախստանում անչափահասների գործերով, այդ թվում նաև անչափահաս տուժողների,

նախաքննությունը կատարվում է հատուկ մասնագիտացում ունեցող քննիչների կողմից:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարցում ուղարկված երկրների գերակշիռ մեծամասնությունում քրեական դատավարության շրջանակներում մինչև 16 կամ մինչև 18 տարեկան անչափահաս կասկածյալների կամ մեղադրյալների, ինչպես նաև մինչև 14 կամ մինչև 16 տարեկան տուժողների մասնակցությամբ կատարվող քննչական կամ դատավարական գործողությունների կատարմանը, **մանկավարժի կամ հոգեբանի մասնակցությունը** պարտադիր է (Վրաստան, Ղազախստան, Ռուսաստանի Դաշնություն, Տաջիկստան): Բացառություն է կազմում Ուզբեկստանը, որտեղ բացառապես քննիչի կամ դատախազի հայեցողությամբ անչափահաս մեղադրյալի հարցաքննությանը մասնագետի կարգավիճակով կարող է մասնակցել մանկավարժ կամ հոգեբան, իսկ Բելառուսի օրենսդրության համաձայն՝ մինչև 14 տարեկան անչափահաս տուժողի և վկայի հարցաքննությանը պարտադիր է և՛ մանկավարժի, և՛ հոգեբանի մասնակցությունը, որոնք քրեական գործով վարույթին ներգրավվում են որպես մասնագետ:

Անչափահասների հարցաքննության հարցում հետաքրքիր մոտեցում է դրսևորել Մոլդովայի օրենսդրությունը: Մոլդովայի քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ անչափահասի հարցաքննությանը հոգեբանի ներգրավումը պարտադիր է, հոգեբանը քննչական գործողության կատարմանը մասնակցում է մասնագետի կամ **հարցաքննողի** կարգավիճակով: **Հարցաքննող** է այն անձը, որն իրավասու մարմնի կողմից հրավիրվում է որպես միջնորդ անչափահաս տուժողի կամ վկայի հարցաքննությանը մասնակցելու համար: Որպես հարցաքննողներ հանդես են գալիս հատուկ մասնագիտացում ունեցող իրավաբանները կամ հոգեբանները: Անչափահասի հարցաքննությանը հարցաքննողը մասնակցում է որպես մասնագետ: Մոլդովայի օրենսդրությամբ առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերվել նաև անչափահաս տուժողների հարցաքննությանը տարիքային առանձնա-

հատկություններից ելնելով, մասնավորապես՝ մինչև 14 տարեկան տուժողը հարցաքննվում է միայն սեռական ոտնձգության, երեխաների առևտրի, ինչպես նաև ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով, իսկ մյուս գործերով՝ եթե դա պահանջում է արդարադատության կամ անչափահասի շահը:

ՌԴ օրենսդրությունն առանձնահատուկ մոտեցում է դրսևորել սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով տուժողների նկատմամբ, այն է՝ 16 տարին չլրացած, ինչպես նաև 16 տարին լրացած, սակայն հոգեկան խանգարմամբ տառապող կամ հոգեկան զարգացվածության մեջ հետ մնացող անչափահաս տուժողի կամ վկայի մասնակցությամբ կատարվող հարցաքննության, առերեսման, ճանաչման ներկայացնելու և ցուցմունքների ստուգման քննչական գործողություններին հոգեբանի մասնակցությունը պարտադիր է:

Հարցում ուղարկված երկրների քննչական կառույցների կենտրոնական ապարատների կողմից անչափահասների գործերի քննության նկատմամբ **գերատեսչական վերահսկողություն** իրականացվում է Մոլդովայում, Ղազախստանում, Ուզբեկստանում, Ռուսաստանի Դաշնությունում և Տաջիկստանում: Նշված երկրների շարքում կարելի է առանձնացնել Ղազախստանը և Ռուսաստանի Դաշնությունը, որտեղ նշված գործերով գերատեսչական վերահսկողությունն իրականացվում է կենտրոնական ապարատի հատուկ մասնագիտացված ստորաբաժանումների կողմից, Մոլդովայում քրեական հետապնդման գլխավոր վարչությունը գերատեսչական վերահսկողություն է իրականացվում հատկապես անչափահասների վերաբերյալ ծանր, առանձնապես ծանր կամ հասարակական ռեզոնանս ունեցող գործերի նկատմամբ:

Ղազախստանում, Բելառուսում և Տաջիկստանում **անչափահասների հարցաքննությունը**, անկախ վերջիններիս դատավարական կարգավիճակից, կատարվում է օրվա ցերեկային ժամերին և առանց ընդմիջման չի կարող տևել 2 ժամից, իսկ ընդհանուր առմամբ՝ 4 ժամից ավել:

Անչափահասների հարցաքննության առավել երկար տևողություն է նախատեսված Վրաստանի և Ուզբեկստանի քրեադատավարական օրենսդրությամբ՝ առաջին դեպքում անչափահասների հարցաքննությունն առանց ընդմիջման չի կարող տևել 4 ժամից ավել, քննչական գործողությունը կարող է ընդմիջվել ըստ անհրաժեշտության, իսկ երկրորդ դեպքում՝ անչափահասի հարցաքննության տևողությունը չպետք է գերազանցի 6 ժամը, չհաշված հանգստի համար տրամադրվող մեկժամյա ընդմիջումը:

Մոլդովայի օրենսդրության համաձայն՝ անչափահաս տուժողի մասնակցությամբ կատարվող որոշ դատավարական գործողություններ ևս ունեն որոշակի առանձնահատկություններ: Այսպես, անչափահաս տուժողը պարտավոր չէ առերեսվել իրեն ֆիզիկական կամ բարոյական վնաս պատճառած անձի հետ, իսկ մինչև 14 տարեկան անչափահասները չեն կարող ենթարկվել բերման:

Անչափահասների հարցաքննության տևողության հարցում ըստ տարիքային խմբերի տարբերակված մոտեցում է դրսևորել Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունը: Մասնավորապես՝ մինչև 7 տարեկան անչափահաս տուժողի կամ վկայի մասնակցությամբ կատարվող հարցաքննության, առերեսման, ճանաչման ներկայացնելու և ցուցմունքների ստուգման քննչական գործողություններն առանց ընդմիջման չեն կարող տևել 30 րոպեից, իսկ ընդհանուր առմամբ՝ 1 ժամից ավելի, 7-ից 14 տարեկանի համար՝ 1 ժամից, իսկ ընդհանուր առմամբ 2 ժամից ավելի, 14 տարեկանից բարձր անչափահասի համար՝ 2 ժամից, իսկ ընդհանուր առմամբ 4 ժամից ավելի: Ընդ որում՝ մինչև 16 տարեկան անչափահաս տուժողի կամ վկայի մասնակցությամբ վերը թվարկված քննչական գործողությունների կատարման ընթացքում տեսագրության կամ կինոնկարահանման կիրառումը պարտադիր է, բացառությամբ այն դեպքերի, երբ անչափահաս տուժողը կամ վկան կամ նրա օրինական ներկայացուցիչը առարկում է դրա դեմ:

Երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով մինչև 14 տարեկան անչափահասների նկատմամբ կատարված սեռական ոտնձգության գործերով Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված է դատական փորձաքննության նշանակում՝ պարզելու համար հանցագործության կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող 18 տարին լրացած անձի հոգեկան վիճակը, վերջինիս մոտ աղավաղված սեռական նախասիրությունների առկայության հարցը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ կարելի է հակիրճ նշել հետևյալ եզրահանգումները.

1. քննարկվող ժամանակահատվածում Կոմիտեի մոտ 600 քննիչներից միայն 65-ը կամ 10.8% են անցել անչափահաս տուժողների գործերով քննության առանձնահատկություններին նվիրված վերապատրաստումներ կամ սեմինարներ,
2. անչափահաս տուժողների հարցաքննության համար հատուկ կահավորված սենյակներ նախատեսված են Կոմիտեի Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի մարզային քննչական վարչությունների վարչական շենքերում, Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Վարդենիսի քննչական բաժնի վարչական շենքում, Երևան քաղաքի քննչական վարչության, Երևան քաղաքի Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների քննչական բաժինների վարչական շենքում,
3. անչափահաս տուժողները մեկ քրեական գործի շրջանակներում, որպես կանոն, հարցաքննվում են երկու և ավելի անգամներ,
4. անչափահաս տուժողների հարցաքննությանը մանկավարժների մասնակցությունը երբեմն կրում է ձևական բնույթ, վարույթն իրականացնող մարմնի կողմից անչափահասի հարցաքննությանը հոգեբաններ չեն ներգրավվել, սակայն պրակտիկան փոփոխվում է,
5. անչափահասների հարցաքննությունը նախապես չի քննարկվում կամ համաձայնեցվում մանկավարժի կամ հոգեբանի հետ, հարցաքննության ընթացքում անչափահասներին տրվող հարցադրումները և արձանագրություններում արտացոլված ձևակերպումները հաճախ չեն համապատասխանում հարցաքննված անչափահասի տարիքային և մտավոր զարգացածության աստիճանին,
6. տուժող երեխաների առերեսումն իրականացվել է անմիջականորեն, ինչը երբեմն բացասաբար է գնահատվել հարցվողների կողմից,

7. տուժող երեխաների վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը պահպանվել է, բացառությամբ մեկ դեպքի,
8. օրինական ներկայացուցիչների մոտ հիմնականում առկա է վստահություն իրավապահ մարմինների նկատմամբ, սակայն տեխնիկական միջոցների և հնարավորությունների բացակայության հիմքով գործի չբացահայտվելու հանգամանքը բացասաբար է անդրադարձել վստահության ամրապնդման վրա:

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ կարելի է առանձնացնել հետևյալ առաջարկությունները.

1. պարբերաբար կազմակերպել կամ քննիչներին մասնակից դարձնել հասարակական կազմակերպությունների, միջազգային կառույցների կողմից անցկացվող՝ քննարկվող թեմային նվիրված վերապատրաստումների և / կամ սեմինարների,
2. մինչև Կոմիտեի բոլոր մարմիններում և ստորաբաժանումներում անչափահասների հարցաքննության համապատասխան սենյակների կահավորումը, մանկապարտեզ հաճախող և ցանկացած այլ տարիքի անչափահաս տուժողի հարցաքննությունն առավել հարմարավետ և անկաշկանդ պայմաններում անցկացնելու նպատակով միջոցներ ձեռնարկել անչափահասների հարցաքննությունը նախադպրոցական հաստատություններում կամ հիմնական դպրոցներում անցկացնելու ուղղությամբ,
3. տարիքային առանձնահատկություններից ելնելով, ինչպես նաև անչափահասի լրացուցիչ հարցաքննությունը հնարավորինս բացառելու նպատակով՝ անչափահասի հարցաքննությունը նախապես պլանավորել, առաջադրվելիք հարցադրումները քննարկել մանկավարժի կամ հոգեբանի հետ, ինչպես նաև տուժող երեխաների հարցաքննությանը բացի մանկավարժից ներգրավել նաև հոգեբանների՝ նրանց հնարավորություն ընձեռելով նախապես ծանոթանալ երեխայի և նրա առանձնահատկությունների հետ,

4. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունում և դրա տարածքային ստորաբաժանումներում ներդնել սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերով մինչև 14 տարեկան տուժողների մասնակցությամբ վարույթի կազմակերպման առանձնահատկությունները սահմանող փորձարարական ծրագիր,
5. Մոլորվայի օրինակով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ և մանկավարժի ինստիտուտի փոխարեն, հնարավորության դեպքում, նախատեսել հոգեբան–հարցաքննողի ինստիտուտը՝ նախատեսելով մասնագիտացված հոգեբանների համապատասխան բազա, որի հիման վրա քննիչը հնարավորություն կունենա տվյալ հոգեբանին ներգրավել քննչական գործողությանը,
6. պահպանել տուժող երեխայի անձնական տվյալների գաղտնիությունը՝ վերջինիս երկրորդային զոհացումից պաշտպանելու, ինչպես նաև հասարակությունում երեխայի ինտեգրմանն աջակցելու համար,
7. հնարավորինս զերծ մնալ տուժող երեխայի և ենթադրյալ հանցագործի միջև անմիջական առերեսումներ անցկացնելուց՝ կիրառելով «միջնորդավորված» առերեսումներ՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ,
8. բարելավել քննչական մարմինների ու ստորաբաժանումների և երեխաներին աջակցություն տրամադրող պետական, համայնքային և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցությունը՝ մասնավորապես աջակցությունն ուղղելով սեռական հանցագործությունների բացասական հետևանքները չեզոքացնելուն կամ վերացնելուն:
Վերը նշված առաջարկությունները խորհրդատվական բնույթի են (ոչ պաշտոնական) և կարող են կիրառվել կոնկրետ քրեական գործի առանձնահատկություններից և հանգամանքներից ելնելով: